Հիշատակագրություն - 4

/շարունակություն/

ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով իրավական խորհրդատվության և դատական ներկայացուցչության ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-ԻԽՆ-22/50» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 02.09.2022թ. ժամը 15-00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արմենուհի Հարությունյանը,

գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Գարիկ Աբելյանը, Դավիթ Գրիգորյանը, Ոսկի Ֆռանգուլյան և քարտուղար Մարինե Մուրադյանը:

Գնահատող հանձնաժողովը հայտնեց, որ «ԱՐԿԱՏ» ՍՊԸ-ի, «Ի ԷԼ ԷԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի և «Լեգիտիմուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին և ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

1. Ընթացակարգի **1, 2, 3** չափաբաժինների համար **ընտրված** մասնակից ճանաչել **«ԱՐԿԱՏ» ՍՊԸ** -ին:
2. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
3. Անգործության ժամկետի ավարտից հետո 4-րդ աշխատանքային օրը ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Արմենուհի Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գարիկ Աբելյան

_____ Դավիթ Գրիգորյան

_____ Ոսկի Ֆռանգուլյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4
/շարունակություն/

ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով իրավական խորհրդատվության և դատական ներկայացուցչության ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-ԻԽՆ-22/50» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 31.08.2022թ. ժամը 12-00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արմենուհի Հարությունյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Գարիկ Աբելյանը, Դավիթ Գրիգորյանը, Ոսկի Ֆռանգուլյան և քարտուղար Մարինե Մուրադյանը:

1. Անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ

«ԱՐԿԱՏ» ՍՊԸ-ի, «Ի ԷԼ ԷԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի և «Լեգիտիմուս» ՍՊԸ -ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

Փաստաթղթերը ուսումնասիրելու համար նիստը հետաձգել: Հաջորդ նիստը հրավիրել 2022թ. սեպտեմբերի 02-ին, ժամը 15:00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Արմենուհի Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ _____ Գարիկ Աբելյան

_____ Դավիթ Գրիգորյան

_____ Ոսկի Ֆռանգուլյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4
/շարունակություն/

ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով իրավական խորհրդատվության և դատական ներկայացուցչության ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-ԻԽՆ-22/50» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.08.2022թ. ժամը 12-00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արմենուհի Հարությունյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Գարիկ Աբելյանը, Անի Միքայելյանը, Ոսկի Ֆռանգուլյան և քարտուղար Մարինե Մուրադյանը:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ մասին

1. **«ԱՐԿԱՏ» ՍՊԸ** կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայտի գնահատման համար առանցքային նշանակություն ունեցող մի շարք փաստաթղթեր բացակայում են:

Այսպես՝

1) ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար իրավական խորհրդատվության և դատական ներկայացուցչության ծառայությունների գնման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 1-ին մասի «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնի 2.3 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու պահին և դրան նախորդող **առնվազն երեք տարիների ընթացքում** իրականացրած լինի փաստաբանական գործունեություն կամ հանդիսանա իրավաբանական ծառայություններ մատուցող անձ կամ կազմակերպություն (փաստաբանական գրասենյակ):

Հայտին կից չի ներկայացվել ոչ «Արկատ» ՍՊԸ-ի գրանցման վերաբերյալ փաստաթղթերը, որոնցով կհիմնավորվի, որ Ընկերությունը փաստաբանական գործունեությամբ զբաղվում է երեք և ավելի տարիներ, ոչ էլ ընկերության կողմից իրավական խորհրդատվություն և դատական ներկայացուցչություն իրականցնող փաստաբանների առնվազն երեք տարվա փաստաբանի մասնագիտական փորձի վերաբերյալ որևէ վերաբերելի փաստաթուղթ (փաստաբանական գործունեությամբ զբաղվելու արտոնագիր):

2) Հրավերի 1-ին մասի «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման

ենթակետի համաձայն՝ պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ որակավորումը ունեցող աշխատանքային ռեսուրսները՝ **վերջին 2 տարվա ընթացքում որպես գործին մասնակցող անձի ներկայացուցիչ դատական ներկայացուցչության իրականացում ընդհանուր առնվազն 40 քաղաքացիական գործերով:**

Հայտ ներկայացնող կազմակերպությունը թեև ներկայացրել է համապատասխան դատական գործերի ցանկ, սակայն այդ ցանկում ներառված գործերի պայմանագրերը կամ Datalex.am կայքից արված որևէ քաղվածք չի ներկայացրել, որով հնարավոր կլինի հավաստիանալ, որ ընկերության փաստաբանները հենց այդ գործերով իրականացրել են դատական ներկայացուցչություն: Թեև հրավերում նշված չէ, որ բոլոր 40 գործերով պետք է ներկայացնել պայմանագրեր, բայց հայտի գնահատման տեսանկյունից նախընտրելի է, որ ցանկում ընդգրկված գործերի մի մասի վերաբերյալ առկա լինի նման տեղեկատվություն:

Ավելին, ցանկում ընդգրկված գործերի մեծ մասը հենց Հրավերում նշված գործերի վերաբերյալ են (սեփականության իրավունքի հետ կապված վեճեր, գործարքների հետ կապված վեճեր, աշխատանքային վեճեր, վարչական մարմինների կողմից կայացված որոշումների, գործողությունների և անգործությունների վիճարկման վերաբերյալ վեճեր), ուստի ցանկալի կլիներ դրանցով հենց կոնկրետ փաստաբանի կողմից ներկայացուցչություն իրականացնելու փաստը հավաստող փաստաթղթերի, ինչպես նաև հանձման-ընդունման ակտերի ներկայացում:

Հարկ է նշել նաև, որ հայտին կից ներկայացված պայմանագրերի պատճենների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մի շարք պայմանագրերում չի կոնկրետացվում, թե ինչպիսի գործերով է իրականացվել ներկայացուցչությունը, այսինքն՝ պայմանագրով կատարվող աշխատանքների ծավալը և ոլորտը անորոշ է:

2. **«Ի ԷԼ ԷԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ** կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայտի գնահատման համար առանցքային նշանակություն ունեցող մի շարք փաստաթղթեր բացակայում են: Այսպես՝

1) Հրավերի 1-ին մասի «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնի 2.3 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու պահին և դրան նախորդող **առնվազն երեք տարիների ընթացքում** իրականացրած լինի փաստաբանական գործունեություն կամ **հանդիսանա իրավաբանական ծառայություններ մատուցող անձ կամ կազմակերպություն (փաստաբանական գրասենյակ):**

Քանի որ հայտը ներկայացվել է իրավաբանական ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից, ուստի բացի փաստաբանների փաստաբանական գործունեության արտոնագրերի պատճեններից պետք է ներկայացվեր նաև ընկերության գրանցման վերաբերյալ փաստաթղթերը, որոնցով կհիմնավորվի, որ ընկերությունը փաստաբանական գործունեությամբ զբաղվում է երեք և ավելի տարիներ:

2) Հրավերի 1-ին մասի «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնի 2.3 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված պահանջին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած

պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ որակավորումը ունեցող աշխատանքային ռեսուրսները՝ դատական ներկայացուցչության իրականացման փորձ հետևյալ տեսակի գործերից առնվազն երկուսով՝ վնասի հատուցման վերաբերյալ վեճեր, սեփականության իրավունքի հետ կապված վեճեր, գործարքների հետ կապված վեճեր, աշխատանքային վեճեր, հանրային ծառայության անցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճեր, վարչական մարմինների կողմից կայացված որոշումների, գործողությունների և անգործությունների վիճարկման վերաբերյալ վեճեր:

Հարկ է նշել, որ հայտին կից ներկայացվել է մի քանի պայմանագրերի և հանձնման-ընդունման ակտերի պատճեններ, որոնցով իրականացվելիք դատական ներկայացուցչությունը ընդգրկում է հիմնականում չկատարված վճարային պարտավորությունների, գրավադրված գույքի գրավից հանելու և նմանատիպ հարցերի հետ կապված դատական ներկայացուցչության իրականացում:

Այս կապակցությամբ, հայտի գնահատման համար առաջարկվում է ներկայացնել լրացուցիչ պայմանագրերի պատճեններ, որոնցով իրականացվելիք դատական ներկայացուցչությունը վերաբերում է հայտում նշված ոլորտներից մի քանիսին:

3. «Լեգիտիմուս» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում բացակայում են

Հրավերի 1-ին մասի «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնի 2.3 կետով պահանջվող փաստաթղթերը:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և գնման հայտով սահմանած գինը

Չափաբաժինների		Չափաբաժնի անվանումը
համարները	գնման գինը	
1	10070000	Քրեակատարողական ծառայության գործառույթների իրականացման հետ կապված դատական գործերով իրավական խորհրդատվության և ներկայացուցչության իրականացում
2	8480000	ՀՀ քաղաքացիություն շնորհելու և ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու մասին կայացված հրամանագրերի վիճարկման հետ կապված դատական գործերով իրավական խորհրդատվության և ներկայացուցչության իրականացում
3	6360000	Աշխատանքից ազատման հրամանների վիճարկման, վնասի հատուցման, գնումների գործընթացի ընթացքում կայացված որոշումների բողոքարկման և պայմանագրային պարտավորությունների չկատարման համար գումարի բռնագանձման պահանջների հետ կապված դատական գործերով իրավական խորհրդատվության և ներկայացուցչության իրականացում

Հ/Հ	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ն /ՀՀ դրամ/		
	«ԱՐԿԱՏ» ՍՊԸ	«Ի ԷԼ ԷԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	«Լեգիտիմուս» ՍՊԸ
1	8075000	10070000	9565000
2	6800000	8480000	7844000
3	5100000	6360000	5851200

4. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ նիստը կասեցնել է մեկ աշխատանքային օրով, որպիսի ընկերությունները շտկեն անհամապատասխանությունները: Հաջորդ նիստը հրավիրել 2022թ. օգոստոսի 31-ին, ժամը 12:00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Քարտուղարին՝

ARMEPS համակարգի միջոցով այսօր տեղեկացնել **«ԱՐԿԱՏ» ՍՊԸ-ին, «Ի ԷԼ ԷԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ին և «Լեգիտիմուս» ՍՊԸ -ին**՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Արմենուհի Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գարիկ Աբելյան

_____ Անի Միքայելյան

_____ Ոսկի Ֆռանգուլյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով իրավական խորհրդատվության և դատական ներկայացուցչության ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-ԻԽՆ-22/50» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.08.2022թ. ժամը 12-00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արմենուհի Հարությունյանը,

գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Գարիկ Աբելյանը, Անի Միքայելյանը, Ոսկի Ֆռանգուլյան և քարտուղար Մարինե Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-ԻԽՆ-22/50» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ԱՐԿԱՏ» ՍՊԸ (ք. Վանաձոր, Թատերական 8/1-49)**
2. **«Ի ԷԼ ԷԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ (ք.Վանաձոր, Արաբկիր փ 3)**
3. **«Լեգիտիմուս» ՍՊԸ (ք. Երևան, Աբովյան 34)**

Հանձնաժողովը որոշեց՝

Փաստաթղթերը ուսումնասիրելու համար նիստը հետաձգել: Հաջորդ նիստը հրավիրել 2022թ. Օգոստոսի 29-ին, ժամը 12:00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Արմենուհի Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գարիկ Աբելյան

_____ Անի Միքայելյան

_____ Ոսկի Ֆռանգուլյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան

ԹԵՐԹԻԿ

«ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-ԻԽՆ-22/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման

N	Մասնակցի գնահատվող չափանիշները	Գնահատականը*	Մասնակցի գնահատման արդյունքները *		
			Մասնակցի անվանումը		
	Մասնակցի՝		**«ԱՐԿԱՏ» ՍՊԸ**	**«Ի ԷԼ ԷԼ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ**	**«Լեգիտիմուս» ՍՊԸ**
1	**Պիտանելիության չափորոշիչ** */ներառյալ <<Մասնագիտական փորձառություն և աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը հավաստող փաստաթղթերը/*	Բավարար Անբավարար	բավարար	բավարար	բավարար
2	**Ֆինանսական չափորոշիչ**	Բավարար Անբավարար	բավարար	բավարար	բավարար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		**Բավարար Անբավարար**	բավարար	բավարար	բավարար

*Բավարար է գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Չափորոշիչներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

հանձնաժողովի անդամի անունը, ազգանունը

ստորագրությունը

« 02» սեպտեմբերի 2022թ.